Հայ դասական պատմագրության ժանրային զարգացման ընթացքը, շարունակվելով մինչև 17–18-րդ դարերը, այնուամենայնիվ, ընդհանրականության մեջ այդպես էլ չդրսևորեց ավելի բարձր մակարդակ, քան այն, որ նվաճվել էր 5-րդ դարում: Հետագա դարերի հայ պատմիչների տարաբնույթ ընդգրկումներ, կառուցվածքներ ու գործառնականություն ունեցող երկերի արժեքայնության չափորոշիչը հիմնականում առանձին երևույթների ու դրսևորումների, այլ խոսքով՝ մասնավորությունների կայացման մեջ է: Դա վերաբերում է հատկապես արտապատմագիտական հատույթին՝ երկի ընդհանուր հյուսվածքին, կառուցվածքային յուրահատկություններին, պատումի կերպին, ժանրային նկարագրին, գեղարվեստական արտահայտչամիջոցներին և այլն, քանզի, այսպես թե այնպես, հայ գրեթե յուրաքանչյուր պատմիչ իր աշխատությունում պատմական կարևոր իրադարձություններ այս կամ այն չափով վկայագրել է:

Այդ իմաստով բացառություն չէ նաև 17-րդ դարի պատմիչ ***Առաքել Դավրիժեցին*** և նրա ***«Գիրք պատմութեանց»*** աշխատությունը[1]: Նա և ուշ միջնադարի մյուս պատմիչները, Մայիս Ավդալ-

---

[1] Առաքել Դավրիժեցու կյանքի ու գործի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Վարագ Առաքելյանի «Առաքել Դավրիժեցի» (մահվան 300-ամյակի առթիվ) հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, համար 3, նույն հեղինակի «Առաջաբանը» Առաքել Դավրիժեցու «Պատմու-